ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 0261-4-00-01
14 / 05 / 2020թ.

2020թվականի մայիսի 14-ին Սևանի համայնքապետարանում տեղի ունեցավ Սևան համայնքի ավագանու թիվ 3 հերթական նիստը:

Նիստը վարում էր՝ համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

քարտուղարում էր՝ աշխատակազմի քարտուղար՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Աշխատակազմի բաժինների պետեր՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԸ
ԷԴՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆԸ

Աշխատակազմի մասնագետ

ԶԼՄ ներկայացուցիչներ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝

Մկրտիչ Մալխասյանը
Աշոտ Նադարյանը
Արսեն Սարգսյանը
Արթուր Մելքոնյանը

ԼՍԵՑԻՆ՝
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 14.05.2020Թ. ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել համայնքի ավագանու՝ 14.05.2020թ. թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2020ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

2. Ք. ՍԵՎԱՆ, ԳՈՄԱՁՈՐ ԹԱՂԱՄԱՍ, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ «ՄԱՇՏՈՑՆԵՐ» ԿՈՉՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ՍԵԼԱՎԱՏԱՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/ ԶԵԿ. ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

3. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ՝. ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

<u>Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ԼՍԵՑԻՆ՝
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2020ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/ ՁԵԿ. ԷԴԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 24-Ա

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել ի գիտություն Սևան համայնքի բյուջեի 2020թվականի 1-ին եռամսյակի կատարման մասին հաղորդագրությունը / թիվ 1, 2, 3 հավելվածները կցվում են /:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ԼՍԵՑԻՆ՝
Ք. ՍԵՎԱՆ, ԳՈՄԱՁՈՐ ԹԱՂԱՄԱՍ, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՓՈՂՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՇՏՈՑՆԵՐ ԿՈՉՎՈՂ ՏԵՂԱՄԱՍԻ ՍԵԼԱՎԱՏԱՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
/ ՁԵԿ. ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

- Որոշում թիվ 25-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզում 2020թվականին կանխատեսվող հնարավոր վտանգների նվազեցման և հետևանքների վերացման միջոցառումների պլան-ժամանակացույցի 28-րդ կետը, ինչպես նաև համայնքի բյուջեի սուղ հնարավորությունները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հրատապ ծրագիր համարել ք. Սևան, Գոմաձոր թաղ, Խարհուրդների փողոցից մինչև «Մաշտոցներ» կոչվող տեղամասի 850.0մ սելավատարի հունի մաքրումն ու պատերի վերականգնումը՝ հնարավոր վտանգները կանխելու նպատակով:
2. Հրատապ ծրագրերի շրջանակներում «Ք. Սևան, Գոմաձոր թաղ, Խարհուրդների փողոցից մինչև «Մաշտոցներ» կոչվող տեղամասի 850.0մ սելավատարի հունի մաքրում ու պատերի վերականգնում» ծրագիրը ներկայացնել ՀՀ կառավարություն պետական ֆինանսավորում ստանալու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ԼՍԵՑԻՆ՝
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ ԶԵԿ՝. ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 26-Ա

Ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ֆիզիկական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները, մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց համար սահմանել գույքահարկի արտոնություններ հետևյալ չափերով՝

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ

դրամներով

Հ/Հ	Փոխադրամիջոցի սեփականատիրոջ անուն, ազգանուն	փոխադրամիջոցի մակնիշը	փոխադրամիջոցի պետհամարանիշը	Մայր գումար	Տույժի զիջում
1	Արթուր Հովսեփյան	MERCEDES-BENZ C 240	91 UQ 100		4340
2	Մխիթար Հովսեփյան	OPEL ZAFIRA 1.8	91 MO 100		2292

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Համայնքի ղեկավարն անդրադարձավ ծառերի էտման, սանիտարական հատման աշխատանքներին և հավելեց, որ բակային հատվածներում այդ գործընթացն իրականացվում է բնակիչների դիմումների հիման վրա:

Այս օրերին բավականին շատացել է այն դիմումատուների թիվը, ովքեր դիմում են բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման խնդրով: Համայնքի ղեկավարը ևս մեկ անգամ հիշեցրեց, որ բնակֆոնդի պահպանությունը համատիրության խնդիրն է՝ ի դեմս համատիրության նախագահի և սեփականատերերի:

Հաշվի առնելով բնակիչների զգալի մասի սոցիալական վիճակը՝ դեռևս անցյալ տարի համայնքի ավագանու նիստերից մեկում քննարկման է դրվել բնակֆոնդի պահպանությանն ուղղված հարցը և ընդունվել է որոշում, համաձայն որի՝ համայնքապետարանը համատիրության նախագահի կողմից ներկայացված շենքին վերաբերող այս կամ այն հարցը քննարկելուց հետո ֆինանսական աջակցություն է ցուցաբերելու: Սակայն մեծ մասամբ ստացվում է այնպես, որ բնակիչները իրենց պարտականությունները չեն կատարում՝ պատճառաբանելով, որ համատիրությունը որևէ աշխատանք չի իրականացնում շենքում, իսկ համատիրության նախագահն էլ, սեփականատերերի կողմից համապատասխան վճարումներ չկատարելու պատճառաբանությամբ, հնարավորություն չի ունենում առկա խնդիրները լուծել: Այս փակ շղթան պետք է որևէ կերպ բացել, և այս ճանապարհին համատիրությանը ձեռք է մեկնում համայնքապետարանը, սակայն պետք է աշխատել համագործակցված: Անցած տարի բազմաբնակարան շենքերի տանիքներ արդեն իսկ նորոգվել են, այս տարի էլ գործընթացը շարունակվում է:

Համայնքի ղեկավարը հաղորդագրություն ներկայացրեց Սևան քաղաքի Նաիրյան փողոց թիվ 179 բազմաբնակարան շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ, որը «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲ ընկերության կողմից տրված եզրակացության հիման վրա ընդգրկվել է հանրապետության 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի ցանկում:

Չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 164-րդ և 165-րդ հոդվածների համաձայն՝ իրենց պատկանող գույքի պահպանման հոգսը, վնասվածքի ռիսկը կրում են սեփականատերերը և պարտավոր են իրականացնել ընդհանուր բաժնային սեփականությանը վերաբերող պարտադիր միջոցառումներ, սակայն այս դեպքում էլ համայնքը սեփականատերերին չի թողնում իրենց խնդիրներին դեմ առ դեմ, և որպես հրատապ և առաջնահերթություն ներկայացնող ծրագիր՝ Նաիրյան փողոց թիվ 179 շենքի ամրացման հարցը ներկայացրել է կառավարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ